TANNINI

TI PREMIUM® SG

ԿԱՆԱՉ ԹԵՅԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԿԱՏԵԽԻՆԱՅԻՆ ԴԱԲԱՂԱՆՅՈՒԹԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾՎՈՂ ՀԱՏԻԿԱՎՈՐ ՆՅՈՒԹ՝ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

TI PREMIUM® SG-ը հատիկավոր դաբաղանյութ է՝ գինեգործության մեջ օգտագործման համար: Հումքը ստացվում է կանաչ թեյի լավագույն արևելյան սորտերից նուրբ էքստրակցիայի գործընթացի միջոցով: Քաղված տերևները մշակվում են գոլորշով և անմիջապես չորացվում, որպեսզի պահպանվեն կատեխինների և պոլիֆենոլների բնօրինակ և անփոփոխ հատկությունները: TI PREMIUM® SG-ն կատեխինի բարձր պարունակությամբ դաբաղանյութ է, որի բաղադրությունը շատ նման է խաղողի բաղադրությանը:

ԲՆՈՒԹԱԳԻՐ

TI PREMIUM® SG նյութը բուսական հումքի տարբեր տեսակների մանրակրկիտ և բազմամյա ընտրության արդյունք է (R&D Enologica Vason), որոնք բոլորն էլ առանձնահատուկ են իրենց պրոցիանիդային և կատեխինային կազմով:
Նրա բաղադրությունը ուշագրավ է բարձրարժեք տարրերի առկայությամբ, որոնք մեծ ակտիվություն են դրսևորում անտոցիանների և օքսիդատիվ խմորիչների (լակտազների և պոլիֆենոլօքսիդազների) նկատմամբ:
TI PREMIUM® SG-ն ապահովում է արտադրանքի ավելի երկար պահպանման ժամկետ և դիմադրություն օքսիդացումներին, և, հետևաբար, գինու կայունությունն ապահովելու համար այն անուղղակիորեն ներառում է ավելի քիչ ծծմբի երկօքսիդ: TI PREMIUM® SG-ին ունի բարձր ռեակտիվություն պրոտեիների նկատմամբ: TI PREMIUM® SG-ով մշակված գինիներին բնորոշ է կլորություն և ավելի թարմ բույրեր: Խաղողից չստացված այլ կատեխինային դաբաղանյութերին (օրինակ՝ քեբրախոին) բնորոշ զգայական փոխազդեցություններ չեն հանդիպում: «Ակնթարթայինացում» կոչվող արտադրության հատուկ եղանակի շնորհիվ TI PREMIUM® SG-ն ձեռք է բերում չափազանց բարձր լուծելիության հատուկ որակ՝ պահպանելով օրգանոլեպտիկ հատկությունները:

ԿԻՐԱՌՈՒՄ

TI PREMIUM® SG-ի օգտագործումը խաղողանյութերի և երիտասարդ գինիների արտադրությունում օգնում է կանխել օքսիդատիվ գործընթացները՝ անփոփոխ պահելով դրանց բույրերը: Հետաքրքիր է նրա օգտագործումը ասկորբինաթթվի և ծծմբի երկօքսիդի հետ միասին (FLAVOUR SAVE)՝ պահպանելով նրանց սկզբնական հատկությունները: Գինիների դեպքում այն կարող է օգտագործվել ինչպես խմորումից հետո, այնպես էլ պարզեցման ժամանակ. մասնավորապես կարմիր գինու մշակման ժամանակ դրա օգտագործումը մանրացման և դատարկման ընթացքում թույլ է տալիս պաշտպանել և ամրացնել խաղողի կեղևից արդյունահանվող անտոցիանային մասնիկները: TI PREMIUM® SG-ն չափազանց հետաքրքիր է նաև գույնը պաշտպանելու համար սպիտակ գինիների մշակման մեջ՝ փրփրուն և ռոզե գինիներում օգնում է լավ օքսիդա-վերականգնման (ռեդոքս) կառավարմանը՝ պահպանելով արտադրանքի

ENOLOGICA VASON

Enologica Vason S.p.A.
Via Nassar, 37 | 37029 S. Pietro in Cariano (VR) - Italy | Tel. +39 045 6859017 | Fax +39 045 7725188
info@vason.com | www.vason.com

TANNINI

TI PREMIUM® SG

ԿԱՆԱՉ ԹԵՅԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԿԱՏԵԽԻՆԱՅԻՆ ԴԱԲԱՂԱՆՅՈՒԹԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾՎՈՂ ՀԱՏԻԿԱՎՈՐ ՆՅՈՒԹ՝ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ամբողջականությունը և հարուստ բույր հաղորդելով գինիներին: Հետաքրքիր է օգտագործել TI PREMIUM® SG-ո որակի անկման հակված գինիներում՝ հաշվի առնելով մերկապտանների և ծծմբի նկատմամբ վերջինիս ռեակտիվությունը: Այն ունի պարզեցման հատկություն: TI PREMIUM® SG-ն նաև լավ արդյունքների է բերում թորվածքների մշակման ժամանակ:

TI PREMIUM® SG-ն օգտագործելիս հետևեք գործող համապատասխան իրավական կարգավորումներին:

ENOLOGICA VASON

Enologica Vason S.p.A.
Via Nassar, 37 | 37029 S. Pietro in Cariano (VR) - Italy | Tel. +39 045 6859017 | Fax +39 045 7725188
info@vason.com | www.vason.com

TANNINI

TI PREMIUM® SG

ԿԱՆԱՉ ԹԵՅԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԿԱՏԵԽԻՆԱՅԻՆ ԴԱԲԱՂԱՆՅՈՒԹԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾՎՈՂ ՀԱՏԻԿԱՎՈՐ ՆՅՈՒԹ՝ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Զգուշորեն լուծեք անհրաժեշտ քանակությամբ TI PREMIUM® SG-ն տասը բաժնեչափ ջրի մեջ (ցանկալի է դեմինիրալիզացված, առանց մետաղների պարունակության) և ավելացրեք զանգվածին: Մի օգտագործեք մետաղական իրեր կամ կոշտ ջուր:
Խորհուրդ է տրվում օգտագործել պրոտեինային կայուն գինիների վրա ֆիլտրումից մի քանի օր առաջ:

ԴՈԶԱՎՈՐՈՒՄ

5-ից մինչև 15 գր/հլ մանրացման և տեղափոխման համար:
2-ից մինչև 5 գր/հլ կարմիր գինիների պարզեցան ժամանակ:
3-ից մինչև 8 գր/հլ ռոզե գինիների համար:
1-ից մինչև 5 գր/հլ սպիտակ և փրփրուն գինիների համար:

ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ

500 գր պոլիլամինացված տոպրակներ:

ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Պահել զով, չոր տեղում, լույսից հեռու: Զգուշորեն կնքել բաց տոպրակները:

ՎՏԱՆԳ

Եվրոպական գործող կանոնակարգերի հիման վրա արտադրանքը դասակարգվում է. ոչ վտանգավոր:

ENOLOGICA VASON

Enologica Vason S.p.A.
Via Nassar, 37 | 37029 S. Pietro in Cariano (VR) - Italy | Tel. +39 045 6859017 | Fax +39 045 7725188
info@vason.com | www.vason.com